ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Գեորգու Խորիկյանի՝ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» վերտառությամբ Է.00.02-«Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Աքեմենյան տերության պատմությունը, ըստ էության, ամփոփում է Ք.ա. VI-IV դդ. Առաջավոր և Կենտրոնական Ասիայի գրեթե ողջ ընդհանրական պատմությունը: Այդ դարաշրջանը մարդկության պատմության չափազանց կարևոր շրջան է: Դա հասարակական-տնտեսական և քաղաքական ինստիտուտների, ինչպես նաև մշակութային ավանդույթների վերջնական բյուրեղացման ժամանակ էր: Չափազանցություն չլինի ասել, որ Աքեմենյան կայսրության քաղաքական ավանդույթների ազդեցությունն Արևելքում պահպանվել է մինչև նորագույն ժամանակի սկիզբը: Հայաստանն ավելի քան երկու դար գտնվել է այդ համաշխարհային տերության կազմում, ինչը չէր կարող չանդրադառնալ նրա պատմամշակութային կերպարի և լավագույն պետական մոդելի վերաբերյալ Հայաստանյան պատկերացումների վրա: Դա լավագույնս արտահայտվել է Տիգրան Մեծի աշխարհակալ տերության ստեղծման ժամանակ, երբ հայոց տիրակալը կիրառել է դեռևս Աքեմենյանների հորինած ճկուն և արդյունավետ պետական կառուցվածքը, հարստացնելով այն հելլենիստական մշակույթի նորարական դրսևորումներով:

Սակայն, ի հեճուկս սպասումների, Աքեմենյան տերության պատմությունը, նրա քաղաքական ու մշակութային բնութագրերը, այդպես էլ չդարձան հայրենական պատմագիտության մեջ սեեռուն ուշադրության առարկա: Աքեմենյան և Սասանյան Իրանի պատմության իրավաքաղաքական և մշակութային ասպեկտներն ավելի շատ հետաքրքրում էին մերազնյա օտարերկրյա հետազոտողներին, իսկ Հայաստանում այդ թեմայի մեծ մասը մնացել է կամ անձեռնամուխ, կամ քիչ ուսումնասիրված: Հովհաննես Խորիկյանի աշխատանքը կոչված է լրացնել այդ բացը, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ և վերադարձնել ակադեմիական ակտիվ շրջանառության մեջ այդ կարևոր, բայց և դժվար գիտաթեման:

Սույն ատենախոսության մեջ փորձ է արվում վերստեղծել Աքեմենյան տերության վարչական բաժանման ամբողջական պատկերը՝ հաշվի առնելով բոլոր աղբյուրների ու արդի գիտական գրականության առկայությունը: Գրավոր աղբյուրների մանրամասն ուսումնասիրությունը և ատենախոսի կողմից քննարկվող խնդիրների վերաբերյալ գրականության կարճ ակնարկը թույլ է տալիս այս թեման դիտարկել իբրև գիտախնդիր, որում քննվում է Ք.ա. VI-IV դդ. Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը:

Ըստ այս մոտեցման մշակվել է հետազոտության պլանը և կառուցվածքը: Այն կազմված է նախաբանից և 5 գլուխներից: *Առաջին գլուխը* նվիրված է Աքեմենյան տերության Փոքրասիական վարչական բաժանումներին: *Երկրորդ գլխում* դիտարկվում են Աքեմենյան տերության հյուսիսաֆրիկյան և արևելամիջերկրածովյան սատրապությունները: *Երրորդ գլուխը* նվիրված է Աքեմենյան տերության կենտրոնական սատրապությունների վարչական բաժանմանը: *Չորրորդում*

ներկայացված է Աքեմենյան տերության արևելյան սատրապությունների վարչական բաժանմանը: Եվ վերջապես, *հինգերորդ գլուխը* նվիրված է վարչական բաժանման և պատմական աշխարհագրության այլ հարցերին:

Ատենախոսությունը հենված է հարուստ աղբյուրագիտական դասական և արդի գիտական գրականության վրա: Շարադրանքն ընդհանուր առմամբ համոզիչ և տրամաբանական է:

Դրվատանքի է արժանի ատենախոսության գիտահետազոտական հենքը հանդիսացող օգտագործած գրականությունը: Իր մենագրության մեջ ատենախոսը ոչ միայն փաստի համար հիշատակել է այս կամ այն հեղինակին, այլև ձգտել է հասկանալ և հետամուտ լինել նրանց հարցադրումներին: Ի պատիվ ատենախոսի նշենք, որ դա նրան մեծավ մասամբ հաջողվել է: Օգտագործած գրականության մեջ առանձնանում են.

1. Briant P., From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, XX+1196 p.
2. Petit Th., Satrapes et satrapies dans l'empire achéménide de Cyrus le Grand à Xerxès Ier, Bibliothèque de la Faculté de Philosophie et Lettres de l'Université de Liège, Fascicule 254, «Les Belles Lettres», Paris-Liège, 1990, 304 p.
3. Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Franz Steiner Verlag GMBH, Wiesbaden, 1968, XXIII+392 p. և այլոց աշխատությունները:

Չմոռանանք նշել ատենախոսի ևս մեկ անվիճելի առավելություն՝ նրա արդի գիտական չափանիշներին համապատասխանող տերմինաբանական ապարատը և ակադեմիական լեզվամտածողությանը:

Այս ամենը, անշուշտ, վկայում է այն մասին, որ Հովհաննես Խորիկյանն արդեն կայացած գիտնական է և ունակ է հասուն և գիտության ժամանակից մակարդակին համապատասխանող աշխատանքներ կատարելու: Եվ թերևս դա է ամենագլխավորը: Իսկ առայժմ արձանագրենք, որ Հովհաննես Խորիկյանի մենագրությունը, իր գիտական ընգրկմամբ և բարդությամբ, կատարողական ճշգրտությամբ, ձեռք բերված գիտական արդյունքների հիմնավորվածությամբ որոշակի քայլ է Աքեմենյան տերության վարչական բաժանումն իր ամբողջության մեջ դիտարկելու գործում:

Այս ամենով հանդերձ, աշխատանքում կան թերություններ, որոնց վրա կուզեինք ուշադրություն հրավիրել.

Միանգամայն ակնհայտ է ներքին կուռ կապը բոլոր 5 գլուխների միջև, ինչը արժանի է դրվատանքի: Հեղինակը կատարել է հսկայական աշխատանք ցույց տալու համար յուրաքանչյուր առանձին վերցրած սատրապության վարչական կառուցվածքը, վերջինիս առանձնահատկությունները.

1. Սակայն, մեր կարծիքով, աշխատանքում բացակայում են արդի քաղաքական տեսությունների վրա հենված ընդհանրական եզրակացությունները: Սահմանված չէ այս կամ այն սատրապության կամ էլ մի խումբ սատրապությունների պետական կամ վարչական կառուցվածքի տեսակը: Անշուշտ հեղինակը տեսակավորել է սատրապությունները, բայց հիմնականում աշխարհագրական սկզբունքով, թեպետ կարելի է դրանք խմբավորել նաև

տիպաբանորեն: Թերևս կա անհրաժեշտություն ավելի շեշտադրել փոքրասիական հույներով, Լևանտյան փյունիկցիներով, հրեաներով և եգիպտացիներով բնակեցված սատրապությունների առանձնահատկությունները: Աշխատանքը կշահեր, եթե նրանում դիտարկված լինեին Աքեմենյան հսկայածավալ կայսրության արևմտյան և արևելյան սատրապություններ ֆենոմենոլոգիական հորինվածքի տարբերությունը:

2. Աշխատանքում նկատելի չէ Մարական և Աքեմենյան Իրանի վարչական ճարտարապետության գենետիկ կապը նրանց նախորդած կայսրությունների հետ (Ասորեստան, Ուրարտու, Նոր Բաբելական և Եգիպտական տերություններ):
3. Աքեմենյան տերությունը զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների և ժողովուրդների խառնակույտ էր, որոնց մի մասը հետևում ուներ պետականաշինության որոշակի փորձ և հմտություն, իսկ մյուսներն առհասարակ նման փորձառություն չունեին: Բնական է, որ Աքեմենյանները պետք է զգալի ճկունություն և իմաստություն դրսևորեին, իշխանության ամբողջատիրական ուղղահայացը ստեղծելու համար՝ հարմարեցնելով կայսերական վարչական համակարգը տեղական պայմաններին: Աքեմենյանները, տասնամյակներ շարունակ հաջողվել է գտնել մի տեսակ փոխզիջման եղանակ ամբողջատիրական և տեղական առանձնահատկությունների միջև, ինչը ցույց է տալիս պարսից ազգի անվերապահ տաղանդը պետականաշինության հարցերում: Այդ հարցում պարսիկները չափազանց նման են չինացիներին:

   Դժվար է ասել, թե Աքեմենյան Պարսկաստանում գոյություն ունեցել են պետական հորինվածքի և իշխանության բնույթի տեսության որևէ մշակումներ, ինչպես, օրինակ, դա եղել է նույն ժամանակաշրջանի Հելլադայում կամ Չինաստանում, բայց գործնականում համաշխարհային կայսրության կառավարման համակարգն աշխատել է արդյունավետ և անխափան: Հնարավոր է, որ այս անտարակույս արժեքավոր և շատ պետքական աշխատանքը հրատարակելիս հեղինակը կանդրադառնա վերհանած խնդիրներին և դրանց կնվիրի առանձին, թեկուզ և ոչ ծավալուն, գլուխ, որը կամփոփի ատենախոսության մեջ ներկայացված փաստագրական հարուստ նյութը և հնարավորություն կտա առավել խորը ընդհանրացումներ անել

4. Վատ չէր լինի, եթե իր աշխատանքում հեղինակը, գոնե ընդհանուր գծերով, ցույց տար, ի՞նչ անդրադարձ ունեցավ Աքեմենյան պետական հորինվածքը վերջինիս իրավահաջորդ Արևելքի հելլենիստական միապետությունների վարչա-քաղաքական համակարգի վրա:
5. Կարծում ենք, որ դիսերտացիոն աշխատանքն զգալի կշահեր, եթե հեղինակը ծանոթ լիներ հետևյալ աշխատանքներին. Briant P. 'The Empire of Darius III in Perspective', in: W. Heckel/L.A. Tritle (eds.), Alexander the Great. A New History, Oxford, 2009: 141-17; Briant P. Darius in the Shadow of Alexander, Harvard UP 2015; Olmstead A. T. History of the Persian Empire. Achaemenid Period. Hrsg. George G.

Cameron. University of Chicago Press, Chicago, Ill. 1948 և էլի մի շարք ժամանակակից հետազոտողների գործերին:

Հարգարժան մասնագիտացված խորհրդին թո՛ղ չթվա, որ մենք ավելորդ բծախնդրություն ենք ցուցաբերում ատենախոսի հանդեպ: Բնավ, Հովհաննես Խորիկյանն ինքն է՝ թեմայի ընտրությամբ և դժվարին խնդիրներին անդրադարձով, մեզ «հարկադրել» իր աշխատանքին մոտենալ առավել խիստ չափանիշներով: Եվ նույնիսկ այդ խիստ չափանիշների կիրառությամբ մենք չենք կարող բարձր գնահատականի չարժանացնել ատենախոսի կատարած աշխատանքը: Մենք լիովին համոզված ենք, որ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» վերտառությամբ Հովհաննես Խորիկյանի դոկտորական ատենախոսությունը բավարարում է ԲՈԿ-ի կողմից ներկայացված բարձր չափանիշներին: Ուստի մենք երաշխավորում ենք ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի մասնագիտացված խորհրդի առջև, բավարարելու Հովհաննես Խորիկյանի հայցը՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի: Նա դրան արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս
պ. գ. դ., պրոֆ.
Երվանդ Հրանտի Մարգարյան
29. 10. 2020 թ.

Ե. Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայ-Ռուսական համալսարանի գիտական քարտուղար
Կասաբաբովա Ռ. Ս.